

Տարեկան գինը 10 թուրլ կէս տարվանը 6 թուրլ:

կ) ԻՖԽում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

() ասրաբաղաբացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաջատան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

STILL

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Այդ դեռ չը դառնէիք:—Եւ բըխն տեսու-
թիւն: Ուստ «MOTHA» լրագիրը: Սարգսիդու կա-
նանք մասին: Եւ դիմել լուրեր:—Արտաքին տե-
սուսքիւն: Յարմար: Դմանկ թիւղթա-
յից:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւն-
ներ:—Տեղեկացումներ:—Բառաւարակահան: Հայրի ի-
նքան շուքով միտի պաշտանս:

ԱՅՌ. ԴԵՌ. ԶԸ ԳԻՏԵԻՆՔ

Իտալերով մահմետական տիրապետության տակ մնացած ազգություններ, ինչպես հայոց ազգություններ, բնականապես պետք է ստորկանար, վախկոտ դառնար։ Բայց հայի մեջ վախկոտ ոգու արմատացներուն քիչ է նպաստել մեր հոգևորականություններ, որ ցոյց տալով թէ բուն քրիստոնէական, աւետարանական ոգով է վար-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԻ ԻՐԱՒՈՒՆՔԸ Ո՞Վ ՊԻՏԻ ՊԱՇՏՊԱՆԷ

Հարավայս չը կայ որ հայերի մեծագոյն մաս յայտնովն անմեղ տեղը և ի դուր վերաւորուաւ ի զօրքի ստիննելիք, ինչպէս Ռուսոյ հպատակ մի հայ Գաւառական խորալէլ անուամբ որ ճանապարհին անցկացած միջոցում մահացու եկերաք թուրք զօրքի կողմից չարաչար վերաւորուաւ և այժմ մահամբձ միճակ մէջ անկողնոյ կը ծուռայէ, ինչպէս նաև ուրիշ շատեր: Բանը այս աստիճանի հասել էր երբ որ քաղաքին կառավարչէն ֆոսֆոր Մուստաֆա փաշան, փութաց անձամբ թրքաց երեկներով պատերազմի դաշտն ացնելու թեան ինչևէ, և յիտալի պէտք և խոստովանել ու իւր ներկայութիւնը զգալի կերպով տպաւորութիւն ըրաւ թէ զօրքի, թէ պարսից և թէ հայեր վրայ, որոնք սկսան հեռզնտէ ցրուիլ կամ ցըվիլ զիստ զօրութեամբ: Իսկոյն քաղաքը պաշարման միճակի մէջ ցրուեցաւ և ձխաւոր ու հետեւն զօրքերու խումբեր և զուսմարտներ սկսան փոքնեքնով վեր ի վայր չըջլէ: Այդ ցաւակի պատերազմի որ նախ որք պայպիսի ծանրակիւռ պարագայում օտար տէրութեանց կենսութենից և մինը ի նպաստ անտէր հային մի խօսք ասու կամ դնէ՝ անուզղայի կերպիւ ջանք արաւ հաւիրաւուքը պաշտպանելու, և զարմանալիք այն որ քաղաքի զողովրդեան փութ-հիւսապատուր և աստիճան թուրքերի ձևացաւ, որ միշտ իսկ կրտակային առաջը կը փատահամբաւէր հայերին և կը գովէր զօրաց արարքը, որ ստիննելով հայեր վերաւորել էին. Հաւատա ինձ, պատուական ընթերցող, եւրոպայիին իսկի փոյթը չէ թուրքերը, պարսիկները, թուրկերը, ապազանները, չէրքեքները և այլն հայը ողջ ողջ մօրթնելու կաշին քերթնելով հաննա. ևս ստուգելի միշտ իսկ հուս էի՝ օտարն մեզ կըբէք ցաւակից լինելու բաց այս կարնոյ վերջին յեղափոխութեան (եւ արժան է պայպէս կոչել) միջոցում ես ի մօտեան որ ասի մի դառն և ստակայի ձշմարտ թիւն է: Սիւծ տէրութեանց կօտուները իր խնայիս (տուս) պատահանմանից կամ երբ ինքն ինքն

փում՝ քարոզում էր հային հըռ
հնազանդ լինել՝ և արաբներին, և
մօնղօլներին, և պարսիկներին
թիւրքերին, և քիւրդերին և ամեն
իշխողին, ամեն հարստահարողին,
ամեն ոյժ ունեցողին... Մեր կը-
ղերի նպատակը իսկապէս Հեր ա-
ւետարանական հեգուլթիւն քա-
րողելու, այլ նրա նպատակն էր
հաճելի լինելու մահմետական իշ-
խանութեանը: «Թող ժողովուրդը
հարստահարվի, ճնշվի,—նա աւելի
էլ աստուածապաշտ կը զառնայ,
մտածում էին սուրբ հայերը,—
իսկ մենք լաւ յարաբերութիւններ
պահպանելով մահմետական իշխա-
նութեան հետ, կը հարստանանք
և փանքերի թիւր կը բազմաց-
նենք...»

Մենք գիտեինք որ այդ էլ
մեր հոգևորականների գործունե-

(տանը վրայ եղած ճնմնի տակը) դիտակ ի ձեռնին, ակնոցը ըթկնդին, վառած սիկարները բեկամիլին հանդարտ այս ցաւալի եղելութեան հանդիսատեսն էին լինում մինչդեռ վարը փողոցներում էին հարկն կայտարարեան վեհախորհուրդին սօղոսալու յլլելովան Համովի քուրդ վայրենի զօրքերից։ բերանին վարձք կը խնդրէին միթէ վար լիչնելու ե թուրք կառավարութեան այս անկաւ վարձուքին դէմ բողոք բաժնալու համար, որ իրեն հաւատակից բարբարոս պարսիկի կողմնասպառլիւն ընկով, իրեն հպատակ հաւատարմւ է քաղաքակրթ ըրխտոնեայ ժողովուրդը այսպէս անկողծօրէն սուլին կը բռնէ։ եթէ այդ կոնսուլ առուած անհոգ և անճաստէր պարոնները հարատահարեալ հայ ըրխտոնեայ ժողովրդի պաշտպանութիւն չընեն այն ալ այս տեսակ ծանրակէտ դէպքերում, ուրեմն ինչի համար խալիխն (կարպիշ) փռեր նստեր են Հայաստանում։ ինչ զործ ունին հոն, ախպու չէ միթէ իրենց ժամանակին որ այսօրէս անպարտութեամբ վաճառւած է, հաղար տփտոս չէ միթէ տարուէ տարի եղած այն մեծագումար ծախսոց, որը արեւելք մէջ ըրխտոնեայ ժողովրդի իրաւունքների պաշտպանութեան համար մեծ տէրութիւններից լինում են։ Ախ, Եւրօպ, Եւրօպ, քո կոյր աչքերը իր պիտի բացուին, իբր պիտի ճանչնաս հոն քո մեծ արդարւոյն և ջանաս զայն ուղղելու։ Բոք հարատահարեալ արեւելքի ըրխտոնեայ ազգերի նորտաճմնի ողորդ, աղաղակը, բողոքը քո անգլապ սրտի վրայ մի տպաւորութիւն պիտի ընէ։ Ըսցց ինչ, միթէ այս անտարբերութիւնը Եւրօպային համար պայանելի է, մինչդեռ Հայաստանացեակ հայերի լացը, կոծը, ողորդ, աղաղակը օտարը աշխարհաբանի հայերի վրայ այն տարեցոյթիւնը չունեցած, այն տպաւորութիւնը չբրած, որ անհոգ իրենց գանաւած տեղերում, երկիրներում, քաղաքներում, գիւղերում ի նպաստ իրենց թշուառ, ընկճեալ և ամենայնու տաքաբաղղ համալգի և համարիւն եղբայրների մի ձայն բարձրացնէին, որ եթէ արդիւնը մ' ալ չունենար յուսահատ հայերի սրտին վրայ մի բուժիչ բաւամանի աղբեղութիւնը պիտի ընէր։ Այս իմ մտայն կարծում եմ որ օտարաշխարհաբանի հայերը դեռ հաւատալ չեն կամենում թէ իրօք և ստուգապէս Հայաստանը իր բովանդակ հայ բնակիչներով այսօր մեծ վտանգի մէջ է, եթէ այս անգամ մի լաւ որբորոնուէր, տարակոյտ չը կայ որ ամեն հայ անուն կրող մարդ իր թմրութիւնին պիտի սնմարի, պիտի սնի իրեն և օտարն որ դեռ գերեկ է, լաւ որ քո

ութեան եղանակը դարերի ըն-
թացքում: Բայց այնու ամենայ-
նիս մենք չը գիտեինք որ մեր հո-
գեւորականները իրանց ստորկահոգի
ուղղութիւնը կարող են այն ծայ-
րայեղութեանը հասցնել որի հետ
մեզ ծանօթացնում է «Մշակի»
մեր երեկվայ համարի Վանի
թղթակիցը: Ահա ինչ է պատ-
մում մեզ մեր թղթակիցը. Վա-
նի կողմերում մի գիւղի մէջ մի
հայ մարդ դատապարտուած է
եղել մեր հոգեւորականութեան
ձեռքով տասն և հինգ տարի
պահ պահել որովհետեւ մի անգամ
երեք քիւրդ էր սպանել իր անձ
պաշտպաններու համար:

Հատ բան գիտեինք մեր հոգե-
ւորականութեան մասին, բայ-
ցյալ տեսակ հրեշաւոր բան դե-
ռ գիտեինք....

փոխել պլախի տանին հայկ և հայերենների փոխելութիւնը
 դարձել ըստ իւր կարողութեան, զի կուգայ շու-
 տով զիշերը, յայն ժամ ոչ ոք այլ ևս կրնայ գոր-
 ծել և այն ատեն ինչ կը լինի մեր վիճակը, այս
 կարեւոր խնդրը մ' է, վասն որոյ կը թողա՞մ որ
 ընթերցողը այս մասին մտածէ և խորհի, զրէ և
 խօսի. մարջապէս մի բազմանքն այն է որ ամէն մի
 հայ մարդ, կին, երիտասարդ օրփորդ, պատանի,
 աղջիկ պատրաստ լինի միշտ Հայաստանի փրկու-
 թեանը համար իր ինչքը, ստացուածը ժամա-
 նակը, կեանքը, արիւնը, այո, ինչ որ է ունի
 յօժարակամ նուիրելու, և ես տարակույս չունիմ
 որ այն ատեն մեր յոյսերն պիտի իրականանան։

Զ. Գ. Երբեք օրէ ի վեր բոլոր լեզուները մեծ չարթ-
 ման մէջ է. հայերի սրտերը շատ յուզեալ են և
 վերջի ատիժնան ցաւած են ընդհանրապէս կառա-
 վարութեան քննած ապօրինաւոր ընթացքի մա-
 սին և մանաւորապէս մի քանի թուրք պաշտօ-
 նէից ղէմ, որը ջանք ի դարձ դրած էին այս ցա-
 ւալի պարագայում կրակին վրայ չորս տող իւլ
 ածելու իրենց անխոհմ գրուածներով, որոնց
 անսպալով շատ կարելի էր որ պարզ տաճիկ հալա-
 բակութիւնը Հայոց ղէմ գրողուկով նոյն օրը
 մէ սպարափելի կտորբա՞ծ տեղի ունենար Կարի-
 նում։ Այս ցած մարդկանց ատիժնանի խոնարհե-
 ցուցած է ինքզինքը Արապ օղլու Ալը էֆէնդէի
 անուն անընդ որ կառավարութեան փողովք անդամ է
 և Գլխաւոր հակառակորդ Հայոց ազգի։ Այս ա-
 պրիտա՞ր Հայոց եկեղեցւոյ առաջը եկած ատեն
 կսկսի բարկութեան բերնէն եկած հայեցողութիւնը
 դուրս ծայլթել և ապա կեզըրակացնէ ասելով,
 Վէ ֆէնդիմ. էն առաջ ատենց (Հայոց) տէր-
 տէրները և վարդապետները կախելու է, քանի
 այս բոլոր քանիքը նոցանից ծագում է, հեղէ
 սա շուն սևազնւիւր տեսաք (Կարնոյ առաջնորդ
 ղ հեգաթետեան Զարութիւն եպիսկոպոսն է ակ-
 նարկում) բոլորը նա է ընողը և այլն։ Այս ան-
 տեղի խօսքերը զրեթէ բոլոր հոն ներկայ եղող
 հայերը լսելով այժմ պիտի բողբո բառնան կա-
 ռավարութեան ատենաւում այս անձի ղէմ։ Նրէկ
 Հայոց առաջնորդը, Ռուսից, Անգլից և Գաղ-
 լից լոյսաւորների մէյմէկ ծանուցադիր ղրկած էր,
 յորում նա գանդատ կը բառնար Պարսից քեար-
 բէրդալը (Կոստու) առ կառավարութեան և
 եւրոպական կոստուներն ինչպէս նաև Հայոց ե-
 պիսկոպոսարան ղրկած գրութեան ղէմ, և կը բո-
 ղալէ՞մ Պարսից հիւպատոսին ընթացքի ղէմ որ չը
 նայեցի՞ր որ պարսիկ միջոց տանաւոնայ հայ աղջկա-
 նանցութիւնը խնայարողը, թէ պարսիկ մ'եր

Դարերով մեր հոգևորականու-
թիւնը ստրկութիւն էր քարոզու-
հային,—յետոյ ինքն զարմանում է
որ հայը վախկոտ, ստրկահոգի և
դարձեւ Դարերով մեր կղերը ա-
ւետարանի համբերողութեան և
հեզութեան անունով, բայց իսկա-
պէս իր անճշական շահասէր նը-
պատակներով, շողքորթել է մու-
սուլմանների վայրենի բռնաւորու-
թեանը,— և այժմ՝ ինքն զարմա-
նում է որ ազգը իր մարդկային
ինքնասիրութիւնը կորցրել է, վախ-
կոտ է դարձել, իսկ մահմետական
իշխանութիւնը և քրիզերի պէս
նրա բոլոր վայրենի օգնականները
իրանց բռնաւորութեան մէջ զէ-
պի հայը այդքան անամօթ, այդ-
քան վայրենի, այդքան դաժան
են դարձել...

Գ. Ա.

հայ աղայ մը հայհայելով թոնիրը գցողը, թէ պարսիկներն էին հայերի վրայ յարձակելով զանոնք զատնայով և թուրով վիրաւորողները և այլն, կեղեւ անամօթաբար պաշտօնական ծանուցաբերելով ալ պատասխանատուութիւնը այս պարագայում որոշուովն պարսիկները վրայէն վեր առնել և հայերի վրայ դնել կը ջնայան և այն աստիճան անիրաւու անխիղճ կըլլայ որ մինչև իսկ կը նկատի հայերի վրայ զուր տեղը խել մը ամբաստանող թիւններ ընել և զանոնք կտակածելի ցուցնել կառավարութեան առաջը և հիւպատոսներն մօտը, գերապ. առաջնորդը ըստ փաստերով կը ցուցնէ թէ այսպէս կարծած տեղեկում ամեն մեծ և պղտիկ խնդրոց առ թիւ և թէ ի չնորս ֆեարբէրդաշի այսօր իրենց անցեալներովն իբր դող, աւազակ, մարդասպան, և խիտ նշանաւոր հանդիսացող են, խել մը պարսիկ ոճրագործներ կան, որոնք արձակ հատարձակ կարող լիողցնելու կը ըլնէն և պատուաթիւն անվախ կը շարունակեն ամեն ոճիր և բռնութիւն գործել: Այս ամենուն վրայ ուշադրութիւն հրաւիրելէ զինչ Զարութեան եպիսկոպոս Պարսից հիւպատոսի զանգատներն որչափ անհիմն և զրգարատական լինելը ցոյց կը տայ առաքելութեւ հայերից մօտ 15—20 հողի պարսիկներ զաշոյններից վիրաւորուած են, մինչդեռ պարսիկներից ոչ ոք ամաղի չափ իսկ վերջ մը կ'սկի մը ընդունալ է հայերից: Ստուգիւ ամըջ նախու բանը, զգացում այս մարդոց մօտ իսկ չը կայ. նոքա բոլորովն դուրի են այս յատկութիւն նից. ամեն բանը կ'ընեն, կաճցնեն յետոյ իւր պէս ջրի վրայ կեղևն, թուրքի առաձն է. Քեֆէնի խընուղ մալ տահալընը աստորընը՝ ճարտար աւել զակը դողցուած ասլաբան տերը կախաղան կ'ընան. արդարեւ ճշմարիտ խօսք մը որ ասես թ յատկապէս պարսիկների բարոյականութեան համալէ մտածուած: Կտրոյ առաջնորդի այս ընթացք ստուգիւ գովելի է, ալ հատկանայի է որ մեր առաջնորդները, վարդապետները և քահանաներ օտար տէրութիւնների ներկայացուցիչները հեղարարութիւնի մոտեն և ազգի շահերը պաշտպանեն, մեծ կոչում մ'ունեն ու հաջը և մեծա մեծ պատասխանատուութիւններ առաջին Աստուծոյ և մարդկութեան. կղերական դասը ի վարդապետի մեծամեծ դերեր է կատարած մեր ազգայ իրաւունքների պաշտպանութիւնն մասին և անժամ է արդ որ այդ դերերը վերստին կընեն զի այսպիսի են պահանջում ազգային շահերը:

Իրգրում
Մ. Պ. Հայկունի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍ «ՄՈՒԲԱ» ԻՐԱՅԻՆԻՍՏ ԵՄԵՐՍՈՎԻ ԿԱՆՈՆԵՑ ՄԱՍԻՆ

Սարատով քաղաքի կանանց ձեռնարկելու թեան ու գործունեութեան մասին «ՄՈՒԲԱ» լրագիրը մէջ է բերում հետեւեալ փակտերը։

«Նոր արժանայիշատակ ծառայութիւնը սպասուում էր իր անհատական ազդեան, Սոֆիա Պալիզովային, ուղարկել խուլ և աշխարհիս մի անկիւնում մոռացված Սարատով կերէի նա այն ժամանակ մորովն անգամ չէր անցկացնում, որ մի քառասունչիտուն տարուց յետոյ այս խուլ ու հեռուոր Սարատովը կանանց զարգացման կողմից կը գերազանցէ միւս բոլոր քաղաքներին, որոնց թիւում թէկուզ էլ հաշվեցէք մինչև անգամ և նոյն իսկ Տերուկ Մոսկովային։ Նոյն իսկ Կիւշին անգամ յետ մնաց Սարատովից, ինչպէս օրինակ Կիւշին 100 ուսում առնող տղաների վրա միայն 43 տղիկ են, մինչդեռ Սարատովում նոյն քանակութեամբ ուսում առնող տղերանց վրա 70 տղիկ է գալի։ Մեր խօսքը այստեղ ժողովրդական դպրոցներին վրա է, իսկ Սարատովի միջնակարգ ուսումնարաններին, այսինքն իգական սեռի գիմնազիաների աշակերտութիւնը թիւը կշարիկական և բնական ուսումնարաններին մէջ ամբողջ աշակերտների թիւից երկու անգամ աւելի է։

«Բայց այս դեռ բոլորը չէ։ Սարատովի կանայք իրանց մասաւոր զարգացման հետ միասին աշխատում են իրագործել իրանց գիտութիւնները և յարմարեցնել նրանց կենսական գործունեութեան։ Սարատովի կանանց աշխատութեան գրութեան տեղային քննիչը «Саратовский Дневник» թերթի վերջին համարներում կանանց աշխատանքի առիթով մի քանի հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդել։ Օրինակ այդ տեղեկութիւններից երկուսն է, որ Սարատովի ամենաշատ առաւելագործ տիկին Բերնգուտ է, կանանց և երեխաների հիւանդութեան համար ամենաբարձր տիկին Բուխովցեվա է։ Գաղափար գտնված երեք գրատուններից երկուսը պահպանվում են կանանց միջոցներով։ Նրկաթուղու և հեռագրական գրեթէ բոլոր պաշտօնները նոյնպէս կանանց ձեռքին են։ Բայց ամենից աւելի հաճելի է Սարատովի կանանց գործունեութիւնը մանկավարժական ասպարեզում։ Այստեղ նրանք շատ լաւ դիրք են բռնել։ Սարատովի ազգային քաղաքային 19 ուսումնարաններում 20 ուսուցիչները տղամարդիկ են, 20 էլ ուսուցչուհիներ։ Նահանգի դեղական ուսուցչուհիների կոմիտեիցն է 5% է կազմում։ Այս գեղաբաւական է։ Սարատովի կանայք իրանց գործունեութիւնը մտքորէն և հարեան Սամարսկի նահանգը։ Նրեք կանայք ուսուցչութեան պաշտօնով ծաշկենտ գնացին, իսկ մէկը (տիկին Աւրեկեվա) ուղևորվել է Միացեալ-Նահանգները, ուր ահա քանի տարի է, որ աշխատում է մեծ յաջողութեամբ։

«Բայց այս մեր պատմածները, եթէ կարելի է այսպէս աւել մեր գաւառական ինտելիգենցիայի ներկայացուցիչներն են։ Սարատովի հասարակ քաղաքացիութիւնը նոյնպէս ձգտում են դէպի ինքնուրոյն անկախ կեանքը, և համարում են դրան առանց մարդկութեան տեղի սեռի մրցութեան։ Այստեղի ազամարդիկ այնքան բարեմիտ (generant) են, որ ոչինչ ընդդիմութիւն չեն գործ դնում։ Չը խօսելով արդէն այն երեւոյթի մասին, որ Սարատովի մէջ բազմաթիւ կանայք ծառայում են գնաւազան կոմսորներում և այնպիսի առևտրական տներում, ուր մենք մինչև այժմ սովոր էինք տեսնել միայն ազամարդկերանց, բացի այս նրանք իրանց ձեռքն են գցել և աշխատանքի այն մասը, որի համար մեզ այնպէս էր թւում թէ՛ Նայի աղջկերանց ֆիզիկական

ոյժը համապատասխան չէ. և այսպէս կանայք պարտաւոր են Սարատովի նաւահանգստի մօտ փայտեր զարակելով և նրանցով նաւերը բեռնաւորելով։

«Նոր մի և նոյն կանայք և դատարկում են նաւերի աղի բեռները։ Թէ որչափ հաստատ է կնոջ դրութիւնը այս աշխատանքի մէջ պարզ երևում է նրանից, որ հակառակ տէրերը կամայ ակամայ առիպված էին ոչ միայն հաշտվել այդ նոր աշխատանքի հետ, այլ և նրանք ստիպված էին յարմարվելով կնոջ ոյժին, հինգ դուգանոց հակները շինել երեք պուգանոց տաքրակներ։ Անուշտ բոլոր այս աշխատանքները երեխայութեան հասակից սկսած, նրանց մարդիկ անգամ չէ անցել emancipation, անկախութիւն, ազատութիւն խօսքի նշանակութիւնը, և նրանք չեն աշխատում զարգաւորի փառքի համար։ Սա մի ամենատղրական մրցումն է հիմնված անտեսական պայմանների վրա, և այդ աշխատանքի ժամանակ աչքի առաջ է աւելում միայն մի ինդիք, մի նպատակ՝ վստահել օրական պարէնը։ Այստեղ չեն կազմվում վերացական թէօրիաներ, և ոչ քարոզչութիւն գնաւազան սկզբունքներ։ Նիթէ այլապէս լինել, կարծեմ որ Սարատովի կանայք հասանալիա նպատակ իրանց ձեռքը չէին կարող գցել քաղաքի բոլոր խմբիկներն իսկութեան կէտից աւելին։ Նոր տարուց փոքր ինչ առաջ քաղաքային ուսարւմայից կարակ բանալու իրաւունք ստանալու համար կազմված վերահասանութեան ժամանակ 800 կոնկուրէնտներ կէտը կանայք էին։

«Մի և նոյն Սարատովում կանայք նոյնպէս և կառավարներ են, և Մաշա անունով մի աղջիկ այս ասպարեզի մէջ մեծ նշանակութիւն է ստացել, և նրա անունը սատիկ հաշակված է։ Նա նշանաւոր ֆիզիկական ոյժ ունի, և քաղաքում համարվում է ամենաշատ և ամենազգրջը ЛГМОВОЙ կառավար։ Արդէն ութ տարի է, որ նա պարտաւոր է այս աշխատանքով և իր աշխատանքից ու երջարկակից աղամարդիկների կողմից նա կատարեալ յարգանք է վայելում։»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

ԳԱՐԱՉԱՅԱՅԻՑ մեզ հաղորդում են, որ այդտեղից մի քանի վերստ հեռաւորութեամբ գտնվող Ռնդամեղ գիւղում մի երեխայ ընկել է սայլի տակ և ջարդվել։ Կարապետազի չլճակներում յայտնվել են կատաղած շներ, որոնցից մէկը Կարապետազում կծել է մի 15 տարեկան երիտասարդի աչքին։ Շան կծկուց ահապէն վերք է դոյցացել։

Մեզ գրում են ԳԱՆՉԱՅԻՑ օգոստոսի 6-ից «Այս գիւղի չարագործները մտնելով Գանձակի Երեսնեան թաղի քահանայ տէր Արսէնի տունը, որ գտնվում է մեծ կամորջի մօտ, թալանում են նրա տունը, կոտորում են սնդուկը, սպանում են տէր Արսէնին և նրա զբոսայգին։ Չարագործները քահանային բաւական քաշքշուկ յետոյ դաշնով սպանել տակից ծակում են։ Նրեում է, որ չարագործները տաճիկներ են, որովհետեւ ինչպէս տեսնում էք քահանայի ականջի տակը ծակել են, ինչպէս խոզերի հետ են անում։ Քննութիւնը դեռ սկսված չէ։ Երևում է մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդենք։»

Մեզ հաղորդում են ԳՐՈՒՆՑ, որ տեղացի կանայք վեչ և բնի բոլ հն դրաղված։ Նրա գիւղերները հաւաքվում են միմեանց մօտ և լոռո խաղալով են իրանց ժամանակը անցկացնում։

Յիշեցնում ենք մեր բաժանորդներին, որ հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 2 հատ 7 կօպէկանոց մարկաներ։ Իսկ ապահովագիր ստանալու համար 1 հատ 7 կօպէկանոց մարկան։

Մեզ գրում են ՀԻՆ-ՆԱԽԻՉԵՆԻՍԻՑ, «Ներկայ տարվայ յուլիսի 7-ին տեղական նոտարիւսը վաւերացրել է թմբու գիւղի բնակիչ Բաղդայ Շահնա-

զարեանի կտակը, որով նա կտակում է Հին-Նախիչևանի հայոց երկսեռ ուսումնարաններին հինգ հազար ռուբլ, երեսուցէք սուր Զակարի ուսումնարանին երեք հազար ռուբլ և Էջմիածնին 100 ռուբլ։

Մեզ հաղորդում են հետեւեալը. «Ներկար ժամանակ թիֆլիսի Հաւաքար բաժնի փողոցները հոտում էին, որովհետեւ բնակիչները իրանց տան աղբը թափում էին փողոցները։ Բաւական էր մի անձրեւ, որ փողոցները անանցանելի դառնային։ Այժմ պոլցիան խտուրթեամբ հոտում է և ստիպում է բնակիչներին, որ իրանց տան առաջ զընակած փողոցի մասերը մաքուր պահեն։ Յանկաւի կը լինէր, որ ուսու պոլցիականները իրանց հետ թարգմաններ ունենան, որովհետեւ բնակիչները նրանց ասածից ոչինչ չեն հասկանում։»

ԹԻՖԼԻՍԻ Հաւաքար բաժնում գողութիւններ անդադար կրկնվում են։ Որբուհու Կարիա անունով փողոցում գողերը մտել էին մի երիտասարդի տուն, գողացել էին նրա ժամացույցը և փողերը, իսկ շորերը արտաքին են գցել։

ԹԻՖԼԻՍԻՍԻ յայտնվել են մի քանի տիրացու երիտասարդներ, որոնք բան ու գործ են չինել գնալ մեռելատուրը տուն և այնտեղ քելել ուտել։ Այդ երիտասարդները ճաշի ժամանակ հարբում են, միմեանց վրա ձմերուկի կծեցներ են գցում և մինչև անգամ սեղանից զանազան իրեղէններ են գողանում։

Մեզ հաղորդում են որ «Մշակին» ծխատէր քահանայից հաղորդած լուրը, իբր թէ ԹԻՖԼԻՍԻ Հաւաքար բաժնում մի 140 տարեկան կին է միռել, սխալ է։ Մեռնող կինը ոչ թէ 140, այլ 104 տարեկան է եղել։

Մեզ հաղորդում են ՆՈՒՆՈՒՑ, որ այնտեղի սուրբ Աստուածածնի եկեղեցու գաւթում գտնվող ուսումնարանի ուսուցիչը հաւաքել է վրացի երեխաներին և նրանց վրաց լեզու է դաս առել, իսկ հայ մանուկները դասերից զուրկ են մնում։

Մեզ հաղորդում են ՆՈՒՆՈՒՑ, որ այնտեղի ուսումնարանի եկամուտները հետզհետէ պակասում են։ Ուսուցիչները իրանց ուժիկները դժուարութեամբ են ստանում։ Ուսուցիչների ուժիկները ամարային ավանների համար ուսումնարանին հոգաբարձութիւնը կտրում է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՆԱՆՍԻՍ

Փոքր ազդեցութիւն չը գործէց Պրանսիայում լուսաւորութեան միխտարի պ. Ժիւլ-Ֆերրիի այն ձառը, որ նա խօսեց այս օրերս Սորբոնում ընդհանուր պարզեալաւորութեան ժամանակ։ Ինչպէս ասացինք, այդ ձառը ահազին տպաւորութիւն գործէց, ունկնդիրները մեծ ջերմեանով ընդունեցին միխտարի ձառը։ Բոլոր հանրապետական լրագիրները, բացի «Globe»-ից մեծ-մեծ փառաբանութիւններ ու գովեստներ էին կարդում միխտարի ձառին, իսկ բարոյականութեան առաջնորդները—կղերական լրագիրները սաստիկ խորթ են համարում, որ լուսաւորութեան միխտարը այն էլ հասարակ ուսանողների առաջ վեր կենայ ու քաղաքականութեան մասին խօսի։ Լօղը կը կարծի թէ յիշաւի Ժիւլ-Ֆերրի այս առաջին անգամն է, որ մի այսպէս նորութիւն է մտցնում և կարծես այս առաջին անգամն է, որ Սորբոնի կամարների տակ քաղաքականութեան խօսքեր են հնչում։ Կղերական լրագիրների կարծիքով դա անպայել է մի մեծ միխտարի, դա յանդգնութիւն է։ Ամենքին քաջ յայտնի է թէ քանի քանի անգամ հնադարեան Սորբոնը վկայ է եղել դիպլոմատիական զանազան հարցերին վերաբերեալ խօսակցութիւններին

ու ձառերին։ Մեզ հաւատարմոր այս ձառի մասին պէտք է կրկնակի անգամ շնորհակալութիւն անել պ. Ժիւլ-Ֆերրիին, որը այնպէս ընդարձակօրէն և այնչափ մանրամասնաբար բացատրեց իր ձառի մէջ բարձրագոյն ուսման նոր վերամտրոգութիւնների պատճառները և անհրաժեշտութիւնը։ Յետադիմական մաս մուլը տաք-տաք խօսում է վայելչութեան և անվայելչութեան մասին, իսկ երբ որ բանը համարում է մի օրինաւոր միտք յայտնելուն կամ արդէն յայտնած մտքի մասին դատելուն, նրան սիրում է Զաքարիայի պապանձումը։

Նուախի ազգասիրական մօծախմբութիւնները վերջացան։ Չը նայելով յետադիմական լրագիրների բոլոր յուսահատական նախադրւածութիւններին, այնու ամենայնիւ պէտք է խտտովանած, որ այդ մօծախմբութիւնները բոլորովն արժանի էին մեծ քաղաքացու արժանաւոր յիշատակին, և այլ ևս մի անգամ Պրանսիան օգուտ քաղեց դէպքից և ցոյց տուեց, թէ որչափ էլ հնաւայ իր սիրելի բաղաբացու յիշատակը, այնքան էլ աւելի ուսուցի նա նրան թանգ կը գնահատէ։

Հանգէտի բոլոր տեղագրութեան ժամանակու միջոցին ոչինչ ձախտրութիւն, ոչինչ աղետալի դէպք չը պղտորեց ոչ հասարակաց կարգապահութեան ներդաշնակութիւնը և ոչ նրա ուրախութեան թանկագին ժամերը։

Քաղաքական խնդիրների նուազութեան պատճառով Պրանսիական լրագիրները կրաւրված են այնպիսի հարցերով, որոնք ուրիշ ժամանակ գուցէ և անուշադիր մնային։ Մենք այդ լրագիրներում կարդում ենք, որ շուտով Փարիզում այլ ևս ոչ մի պետական մարդ չի մնա։ Միխտարները շուտով կը հեռանան դէպի իրանց գլխաւոր խորհրդարանները։ Մի քանի օրից յետոյ պ. պ. Վալդիգուտտ, Լըպէր, Կօշրէ և Ժիւլ-Ֆերրի իրանց նաւահանգներում կը լինեն։

Մի տասնամեակից օրից յետոյ հանրապետութեան պ. նախագահը կուղևորվի դէպի Ժիւրա, նա հրաժարվել է պաշտօնական ճանապարհորդութենից, նա մերժել է բոլոր այն հրաւերները, որոնք ուղղվել են նրան զանազան նահանգներից։ Հարաւային քաղաքները մանաւանդ Սարսելիա և Ավիւնիօն մեծ յոյս ունեն, որ պ. Ժիւլ-Ֆերրի պաշտօնական այցելութիւն կան նրանց քաղաքներին։ Պարոն նախագահը որ սիրում է իր անձնական հանգստութիւնը, չէ կամեւում որ այս անգամայն ճանապարհորդութիւնն էլ ուրիշ տարիների նման հրաւերներ և խնջոյքների մէջ անցկացնէ։ Նա հանգիստ կաննի Վոն-սու-Վօլթէյում։ Պ. Սարսել նոյնպէս կը հեռանայ մի առ ժամանակ նա առաջ կը գնայ ջերմութիւնը, յետոյ Պապը-Վալէ։ Կարծում են, որ պ. Կամբէտտա էլ կուղևորվի Կրեական պալատը։ Ժիւլ-Վիօնն էլ արդէն հեռացել է քաղաքից։

Քաղաքական հարցերի պակասութեան պատճառով Փարիզի քաղաքային խորհրդարանը խաշակիր պատերազմ է հրաւիրել քաղաքի փողոցների անուններին, որոնց նա կամենում է փոխել։ Նորհրդարանի անգամները մանաւանդ մեծ ցանկութիւն են յայտնել անպատճառ փոխել մի քանի փողոցների անունները, որոնք կրում են կայսրութեան յիշատակը։ Այս կրկնախմբութիւնը իրանց անսահման սէրը դէպի նորահաս հասարակատեութիւնը հասցնում են մինչև խնատիկոսութեան, որովհետեւ ինչ նշանակութիւն տնի փողոցի այս ինչ կամ այն ինչ անունը. շատ անգամ փողոցը կարող է մինչև անգամ և անուն չը կրել։ Փարիզի լրագիրներն սկսեցին սատիկ կծու խօսքերով ծաղրել խորհրդարանի այս տղայամիտ դարանը կը թոյնի փողոցներին շարունակել կրել իրանց պատմական, նուիրական և նուանքը, իսկ ինքը խորհրդարանը յոյս կայ,

Խմբագիր-Հրատարակիչ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Նրբանան հրապարակի վրա ԹԱՄԱՄԴՇԵՎԻ կարամանարայի գէմուգէմը № 11. ա
վերի յարկում վարձով արվում է մէկ ԴԱՀԻՅ ծառայով, լա կարամիքով է առաւօտահլե
սամովարով. դահլիճը մի բալիւն ունի իր առաջ: Գինն է ամսական 40 բուրբ: Բայ
դահլիճը մի է նոյն տանը վարձով արվում են նոյնպէս առանձին ՍԵՆՍԱԿՆԵՐ կարամիք
ծառայով, սամովարով և լուսաւորութիւնով. այդ սենականիւրը ամսական արժէն 25, 20
15 բուրբ: Այդ սենականիւրում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի է նոյն ա
դրան առաջ միբք ծախսող ՅԱԿՈՎԵԼԻՆ:

Strandhøjens 2. grund, 1. etage, 1. stue.

Типографія А. А. Михельсона